ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ-ԲԱՆԱՍՏԵՂԾ ՓԱՍՏԱԲԱՆ

13.08.2015 18:58

Փաստաբան Նորայր Հակոբյանը (արտոնագիր 1832), այսօր՝ օգոստոսի 13-ին, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին է նվիրել իր կողմից հեղինակած ‘Երգ՝ առանց մեղեդու’ բանաստեղծությունների ժողովածուն, որտեղ արտացոլված են փաստաբան բանաստեղծի ներաշխարհը և իր պատկերացրած կյանքի փիլիսոփայությունը:
Փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը շնորհակալություն է հայտնել բանաստեղծ փաստաբանին, տեղեկացնելով, որ փաստաբանների պալատը աշխատանքներ է իրականացնում բացահայտելու համար շնորհաշատ փաստաբաններին, ովքեր ստեղծագործական ձիրք ունեն և կա մտադրություն մոտ ապագայում փաստաբանների պալատում ստեղծել ստեղծագործողների համապատասխան ակումբ:
Հ.Գ.
Նոր-Այրի ստեղծագործություններից մի հատված:
ԱՆՎԵՐՆԱԳԻՐ...
..Բայց ..այգեպանս լավ գիտեմ վաղուց,
Որ կինը միայն տերևն է ծառի
Ու խոր աշնանը լքում է ծառին,
Իսկ ծառը նորից կանաչել գիտի...
Չէ որ իմ այգում հարյուր ծառ ունեմ...

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })